ՇՐՋԱՓԱԿՈՒՄ ԵՎ... ԱՆԴՐՕՎԿԻԱՆՈՍՅԱՆ ԺՊԻՏ

Հյուրընկալության օրենք է, մարդկային հարգ ու կարգ. եթե հյուրը ժպտում է, տանտերն իրավունք չունի նույնը չանելու, որքան էլ այլ տրամադրությամբ, ծանր խոհերով համակված լինի: Ումի՞ց թաքցնենք, ինչու՞ թաքցնենք (և արժե, արդյոք, դա անել) հիմա առավելապես, հայերս ուրախանալու առիթ քիչ ունենք: Իսկ մեր հյուրը՝ «Լոս Անջելես թայմս» լրագրի մոսկովյան թղթակից Մայքլ Պարկսը, գվարթ մի մարդ, դեմքին խաղացկում ժպիտով զրուցում է մեզ հետ ամենադրժվարին, կնճռոտ բաների մասին: Ախր ի պատասխան ինչպե՞ս ժպտաս, հյուրընկալողի անհոգ կեցվածք ընդունես, որքան էլ ըմբռնելի լինի այն իրողությունը, թե անդրօվկիանոսյան քաղաքացին (և ինչու միայն նա, հապա բոլոր արևմուտքցիները, ճապոնացին) ամենաանեղ պահերին էլ ժպտում է, այդպես հաղթահարում դժվարությունները: Մերը, թերևս, հասկանալի չի լինի նրանց. Միացյալ Նահանգների մարդուն, երկիր, որտեղ որքան գիտենք, հարևանի կողմից վայրագ շրջափակում չկա, խանութների դատարկության թախիծ, բենզինի, սննդամթերքի, հիմա արդեն՝ ամեն-ամեն ինչի, նաև՝ ժպիտի դեֆիցիտ: Նաև (որն ամենավհատեցնողն ու վտանգավորն է)՝ հույսի դեֆիցիտ: Հայերիս համար, որ միշտ լավատեսությանը փարված, ապավինել ենք հաջորդ այգաբացին:

Ամերիկացի մեր գործընկերը հետաքրքրվում էր հանրապետության ներկայիս կացությամբ և շարունակ հոլովում «շրջափակում» բառը: Բլոկադա, որի մասին մենք հայերս նույնպես գիտեինք Հայրենական մեծ պատերազմի պատմությունից, Լենինգրադի առնչությամբ, բառ, որից արդեն ազգովի ալերգիա ունենք: Հարցնում է մեր հյուրը, կամենում է իմանալ, թե ո՞րն է շրջափակումից դուրս գալու ելքը: Ի՞նչ ասենք իր ժուռնալիստական գործունեության մոտ երևնամյա ճանապարհին Վիետնամի պատերազմի ահավոր պատկերները տեսած, Եգիպտոսի և Չինաստանի ժողովուրդներին մոտիկ անցյալում պատած դժվարություններին ականատես բազմափորձ մեր գործընկերոջը: Պատասխանենք արցախյան շարժման առիթով մշակված և մամուլին ցայսօր պարտադրվող զավեշտալի ձևակերպումո՞վ, ասենք, որ դա պարզապես մի խումբ խուլիգանամետ տարրերի ձեռքի գործ է և ուրիշ ոչինչ: Ազգովի կրակի մեջ՝ Հայաստանում և Ղարաբաղում, կրկին թաքցնե՞նք ճշմարտությունը՝ հանուն երկրի ու պետության հեղինակության, հանուն մեր ցուցադրական ֆեդերացիայի (ասես թանգարան է, ազգերն ու ազգություններն էլ՝ վահանակներում հավուր պատշաճի տեղադրված նմուշներ): Բայց ո՞վ կհավատա, որ մեծ բանակ ու միլիցիա, հզոր այլ միջոցներ ունեցող երկրում պետական հովանավորության ներքո գտնվող երկաթուղու զուգահեռ գծերի վրա մի խումբ գող ու թալանչի բաշիբոզուկներ են խժդժություններ անում, և կենտրոնական իշխանություններն ի զորոյ չեն բռնել նրանց անլվա ձեռքերը: Եվ մենք՝ հյուրընկալողներս, պատմում էինք իրական կացության, շրջափակման հետևանքով հանրապետության տնտեսությանը, աղետի գոտուն, բոլոր բնագավառներին պատած պատերազմների ժամանակներին բնորոշ ծանրագույն վիճակի մասին: Բայց, միևնույն է, այդ ամենից դուրս գալու, ելքի մասին պատասխանը անորոշ էր, որքան էլ մեր բարեհամբույր զրուցակիցը կընկալում էր կոնկրետ խոսք լսել: Որոշակի բան, հարգելի Պարկս, ինքներս չգիտենք, ակնկալում ենք կենտրոնից, որովհետև շրջափակող հարևանի հետ միևնույն երկրում ենք ապրում, ըստ սահմանադրության, հավասարի իրավունքով, մանավանդ, որ հիմա վերակառուցում է, պետությունն էլ փորձում է իրավական դառնալ...

Բայց պարոն Մայքլը, բավական լավատեղյակ ԽՍՀՄ-ին, մեր կյանքին ու գործերին, քաղաքակրթության մեր ժամանակներին խորթ ու մերժելի բաների համար ոչ էլ զարմանում էր: Եվ երբ պատմեց, թե անցյալ տարի ինչ դժվարությունների է հանդիպել Ղարաբաղյան շարժումը լուսաբանելու նպատակով Բաքու այցելելու, Ադրբեջանի իշխանությունների արգելքների պատճառով, հասկանալի էր դառնում զրուցակցի «օլիմպիական հանդարտությունը» համանման իրավիճակների առնչությամբ: Թեև այդ ամենը չէր խանգարել (ինչպես ԱՄՆ-ի մեր հայրենակիցներից մեկը նույնպես վկայեց), որ Պարկսը ճշմարտացի և արդարամիտ հոդվածաշար հրապարակի իրենց լրագրում, թերթ, որն ազդեցիկներից մեկն է Միացյալ Նահանգներում և ամենամասայականը՝ Կալիֆոռնիայում:

Մեր հյուրն անթաքույց հաճությամբ հայտնեց, որ ինքը վաղուց համակրում է հայ ժողովրդին, հպարտությամբ պատմեց ամերիկահայ իր քավորի մասին: Երեք զավակներս էլ, ասաց նա, դաստիարակված են հանգկական ոգով, երկուսը՝ տղաները, մեկ տարի առաջ կնքահոր ուղեկցությամբ այցելել են Հայաստան, ըմբռշխնել նրա գեղեցկությունները:

—Ընտանեկան դաստիարակությամբ մենք հանրապետական ենք, և ուզում ենք, որ մարդն ազատ ապրի: Այդպես ուզում եմ ազատ տեսնել իմ պապերի երկիր Հյուսիսային Իռլանդիան, ձեր Ղարաբաղը,— հրաժեշտից առաջ ասաց մեր հյուրը:

Ցտեսություն, Մայքլ Պարկս, մինչ նոր հանդիպում՝ այս անգամ Արցախի հյուրընկալ հողում...

Հակոբ ՄԱՐՏՈՒՆԻ